ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

11. 01.2020 թ. ք. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան /դեկանի պաշտոնակատար/

Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան

Խորհրդի նիստին մասնակցում էին 16 անդամից 12-ը:

Բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի պատասխանատուների հաշվետվություն /Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:
2. «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» ուսումնական խորհրդատուների հաշվետվության /Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:
3. Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին.- «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի պատասխանատուների հաշվետվության մասին /Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:

Ա. Սարիբեկյանը արձանագրեց, որ 2019-2020 ուսումնական տարվա համար կազմվել է ԿԾ ղեկավարի աշխատանքային պլան, որտեղ նշված բոլոր աշխատանքները միտված են նպաստելու ԵՊՀ ԻՄ Ռազմավարական ծրագրի և աշխատանքային պլանի պահանջները պատշաճ և ժամանակին իրականացնելուն:

Առաջին կիսամյակի սկզբում, կրթական ծրագրի ղեկավարի տարվա աշխատանքային պլանի համաձայն, նախատեսում էր ուսանողներին համառոտ ներկայացնել ԿԾ ղեկավարի տարվա աշխատանքային պլանը և պարտականությունները, որի նպատակն է ուսանողներին ներգրավել ԿԾ ղեկավարի աշխատանքներում, բացահայտել նրանց կարիքները:

Առաջնային խնդիրներից էր 1-ին կուրսի ուսանողներին ներկայացնել 2019-2023 ուս. տարվա Կրթական ծրագրին: Համադրել տարբեր տարիների Կրթական ծրագրերը, քննարկել փոփոխությունները, որպես «Ֆինանսներ» մասնագիտության նոր կրթական ծրագրով

առաջին խումբ: Ծրագիրը ներկայացվեց նաև IV կուրսին և պետք է նշել, որ նրանց արձագանքը դրական էր: Նրանց կարծիքով ծրագիրը ավելի ընդգրկուն է, սակայն այն ուսումնասիրելուց հետո, ավելի դյուրին կլինի տարբեր ոլորտներում աշխատանք գտնել թե ՀՀ-ում, թե արտերկրում: Ավարտական կուրսում քննարկվել են ԿԾ-ի վերջարդյունքները և բավարարվածությունը դասընթացների կազմակերպման ձևից, դասավանդման մեթոդներից: Մասնակցելով մասնաճյուղում կազմակերպվող տարբեր դասընթացներին, նվիրված դասավանդման ժամանակակից մեթոդների ներդրմանը, ուսանողների քննարկմանն է ներկայացվել Moodl հարթակը:

Վերանայվել և համալրվել են առկա ուսումնական փաթեթները: Պարբերաբար կազմակերպվել փոխադարձ դասալսումներ: Արդյունքները քննարկվել են ամբիոնի նիստում:

Ակադեմիական ազնվությունն ապահովելու նպատակով վերահսկվել են քննական պրոցեսները: Նախ հետևողական ենք եղել,որ առարկայական ծրագրերը և հարցաշարերը տրամադրվեն ուսանողներին կիսամյակի սկզբում(երկու շաբաթվա ընթացքում): Ամբիոնի վարիչի, ՈՒՄՎ ներկայացուցչի, ամբիոնի լաբորանտի հետ համատեղ ստուգվել են հարցաշարերի, դասամատյաններում լրացված թեմաների, դասընթացների փաթեթների և հարցատոմսերի հարցերի համապատասխանությունը:

Կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնից Ֆակուլտետում համատեղությամբ աշխատող ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ տ.գ.թ. Էդգար Հովհաննիսյանը 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակում «Էկոնոմետրիկա» դասընթացը(դասախոսություններ, տնային առաջադրանքներ, ընթացիկ, եզրափակիչ քննություններ) /ֆինանսներ ԿԾ, երրորդ կուրս/ իրականացրել է դասընթացի կազմակերպման, վերահսկման և գնահատման առցանց համակարգով (online cms open engine), որը հնարավորինս ապահովում է ակադեմիական ազնվությունը և գնահատման օբյեկտիվությունը: Այս համակարգը հնարավորություն տալիս ձևավորել ուսանողի արդյունարար գնահատական ընդգրկելով կիսամյակի ընթացքում ուսանողի կատարած աշխատանքները(ինքնուրույն աշխատանք, տնային առաջադրանքներ) :

Քննաշրջանը անցավ առանց խոչնդոտների և խախտումների, բողոքարկումներ չեն արձանագրվել:

Ավարտական և կուրսային աշխատանքների թեմաները ուսանողներին տրամադրվել կարգում սահմանված ժամանակացույցին համապատասխան: Առայժմ այս հացում խնդիրներ չեն գրանցվել:

Աշխատանքային պլանով նախատեսված է դասախոսների շրջանում տարբեր խնդիրների շուրջ իրականացնել քննարկումներ: Քննարկման ընթացքում նրանք հիմնականում նշում են, որ կարևոր է ուսանողի արդյունարար գնահատականի մեջ, ներառել ընթացիկ առաջադրանքներից, հետազոտական աշխատանքներից հավաքած միավորները, դասընթացի փաթեթներում ներառված բաժինները պարզեցվի, գոհ են մասնաճյուղում կազմակերպվող վերապատրաստումներից, կարծում են, որ Moodl ծրագիրը կնպաստի դասավանդման արդյունավետությանը և կապահովի ուսանողի հետ հետադարձ կապը: Սակայն ծրագիրը դեռ լիարժեք չի կիրառվում:

Սեպտեմբերի 11-13-ը ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում իրականացվեց կենտրոնական բանկերի Մակրոտնտեսական մոդելավորման 22-րդ համաժողովը՝ «Ընդլայնելով դրամավարկային քաղաքականության սահմանները» թեմայով: Սեպտեմբերի 12-ին ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի I-IV կուրսի ուսանողներին հնարավորություն ընձեռվեց նույնպես ներկա գտնվելու համաժողովին: Մասնաճյուղի 25 ամյակի առիթով, ուսանողները հնարավորություն ունեցան մասնակցելու բանկային ոլորտի փորձառու մասնագետի սեմինար քննարկմանը՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար»:

Լրացուցիչ պրակտիկա (internship) անցնելու համար, 4-րդ կուսի երեք ուսանող ներկայացվել են Ամերիկյան համալսարանի Թրփանջյան ՓՄՁ աջակցման կենտրոն, որպես բիզնեսի վարման թրենինգի օգնականներ, որը հնարավորություն տվեց ունեցած գիտելիքները կիրառել, ձեռքբերել նոր գիտելիքներ ու հմտություններ, խմբում աշխատելու փորձ:

Շարունակվում է համագործակցությունը ՀՀ ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի հետ: Համատեղ կազմված Ֆինանսներ ԿԾ-ը 2019-2023 թթ. ուս.տարվա համար մեկնարկեց: ԿԾ-ից ուսանողների և դասախոսների բավարարվածությունը կպարզվի ուստարվա ավարտին: ԿԾ-ի դասընթացների համար նշված գրականության ցանկը, պարտադիր գրականությունը, ներկայացվել է մասնաճյուղի գրադարանի վարիչին: ԿԲ-ի

Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնը նույնպես կաջակցի գրականության և լրացուցիչ նյութերի համալրմանը:

Ա. Ուլիխանյանը նշեց կատարած հետևյալ աշխատանքները՝ քննարկվել է դասախոսների և ուսանողների հետ «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերի /2019-2023թթ./ վերջնարդյունքները, ընդհանուր և մասնագիտական կառուցամասերը և քննարկումների արդյունքում ձևավորվել է առաջարկությունների փաթեթ, որոնք էլ հաշվի կառնվեն 2020-2024թթ «Զբոսաշրջություն» կրթական ծրագրում: Վերանայվել են որոշ դասընթացների ծրագրային բովանդակությունները(«Զբոսաշրջության իրավունք»)

Ա. Ուլիխանյանը նշեց, որ ուսումնասիրվել է կուրսային և ավարտական աշխատանքների թեմատիկան, դրանց արդիականությունը և կիրառական նշանակությունը: Վեր են հանվել ուսանողների կրթական կարիքները և դրանց լուծման համար հարց է բարձրացվել ֆակուլտետի դեկանի և ԵՊՀ ԻՄ տնօրենի մոտ, որը կապված էր անգլերենի լեզվի հետ: Իրականացվել են I-II կուրսերի հետ պարբերաբար հանդիպումներ, քննարկումներ:

Մեթոդական աշխատանքներ են իրականացվել երիտասարդ դասախոսներին հետ՝ դասընթացի փաթեթների կազման շուրջ:

Արտահայտվեցին.- Գ. Հովհաննիսայանը, Պ. Ասլիբեկյանը

Նրանք նշեցին, որ ցանկացած հաշվետվություն պետք է ներառի ինչպես կատարած աշխատանքները, այնպես էլ բացթողումները: Միաժամանակ նրանք հայտնեցին, որ ԿԾ-ի պատասխանատուները համագործակցում են ամբիոնի վարիչների հետ: Դա շատ արդյունավետ աշխատանք է, քանի որ ԿԾ-ի կազման գործընթացում ի հայտ եկած թերությունները անմիջապես լուծում են ստանում:

Որոշեցին.- «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերի պատասխանատուների կատարած աշխատանքը գնահատել բավարար:

2. Լսեցին.- «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» ուսումնական խորհրդատուների հաշվետվության մասին/Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:

Ա. Սարիբեկյանը նշեց, որ ուսումնական տարվա առաջին օրը նվիրվեց ուսանողների հետ նոր կրթական ծրագրի /2019-2023/ հետ ծանոթացմանը: Առաջին կուրսի ուսանողները ուղորդվեցին համագործակցելու ՈՒԽ –ի հետ, որն էլ կօգներ նրանց արագ ինտեգրվելու ուսանողական կյանքին: Առաջին կուրսի ավագը ծանոթացել է մատյանի վարման կարգին:

Բացակայությունների կրճատման, ուսման վճարների ժամանակին վճարելու, ուսանողների ակտիվությունը զարգացնելու նպատակով ուսանողներին ներկայացվել են մասնաճյուղում կրթական գործընթացին վերաբերող կանոնակարգերը՝ ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման, ԵՊՀ ԻՄ ուսանողների դիմումների, բողոքների և առաջարկների քննարկման վերաբերյալ, ԵՊՀ ԻՄ ակադեմիական ազնվության: Ստացած տեղեկատվությունը լրացնելու, թարմացնելու, դասատախտակի, քննությունների գրաֆիկների և ընհանրապես մասնաճյուղում իրադարձություններին տեղեկացված լինելու համար ուսանողները օնլայն լսարանում ծանոթացան մասնաճյուղի կայքի կառուցվածքին:

2019-2020 ուստարվա սկզբում կարևոր էր պայմանագրերի կնքումը և վճարների փոխանցումը: Այսպես I կուրսում 17 ուսանողից 5-ը սովորում է անվճար հիմունքներով, 12՝ վճարովի, որից մեկ ուսանող վճարի լրիվ փոխհատուցմամբ: Չորս ուսանողի վճարները զեղչվել են:

Երկու ուսանող տարեսկզբին և մեկը կիսամայկի ավարտին համալրել են ՀՀ զին. ուժերը:

Քանի որ այս 2019-20 ուստարով մեկնարկում է Կենտրոնական բանկի Դիլիջանի հետազոտական կենտրոնի մասնագետների հետ համատեղ կազմած կրթական ծրագիրը, հատուկ ուշադրություն է դարձվել կրթական ծրագրում դասընթացների համար նշված գրականության ցանկին: Ցանկը տրամադրվել է գրադարանի վարիչին: ՈՒսանողների հարցումներից պարզվեց, որ դեռ կա գրականության հետ կապված խնդիր, ոչ միայն օտարալեզու, այլ նաև մայրենի և ռուսերեն լեզուներով: Սակայն գրադարանը ունի մեծ էլեկտրոնային գրադարան: ՈՒսանողները կիսամյակի վերջում նաև կարծիք հայտնեցին անցած դասընթացների թեմաների, ժամաքանակների, դասավանդման մեթոդների, գնահատման ձևի, ուսանողական առօրյայի, ուսման պայմանների շուրջ: Նրանք նշեցին «Գծային հանրահաշիվ» և «Անալիտիկ երկրաչափություն» դասընթացի սեմինար պարապմունքների ժամաքանակը ավելացնելու, անգլերեն լեզվի ֆակուլտատիվ կազմակերպելու անհրաժեշտության մասին: Բարձրացրեցին անգլերեն լեզվով գրականության և լսարանների ջեռուցման խնդիրները:

Տարեսկզբին ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում կազմակերպած կոնֆերանսին մասնակցեցին I կուրսի երկու ուսանողուհի, որը խթան կհանդիսանա ուսման մեջ հաջողելուն:

Ֆինանսներ մասնագիտությամբ առաջին կուրսի ուսանողների համար ներդրվել է հեռահար ուսուցման ծրագրեր՝ Matlab և EDX, որն էլ հնարավորություն կտա ավելի արդյունավետ կազմակերպել դասընթացները և ապահովել ակադեմիական ազնվությունը:

Ա. Ուլիխանյանը նշեց, որ առաջնորդվել են «ԵՊՀ ԻՄ-ում ուսումնական խորհրդատուի գործունեության կանոնակարգ»-ի համաձայն: Ըստ որի 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակում «Զբոսաշրջություն» մասնագիտության ուսումնական խորհրդատուի կողմից, համաձայն ֆակուլտետի գիտական խորհուրդի կողմից հաստատված պլանին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- պարբերաբար անց են կացվել ուսումնական խորհրդատուի ժամեր:
- ստեղծվել են կուրսի համար էլեկտրոնային հասցե:
- ուսանողների ծանոթացրել եմ իրենց իրավունքներին և պարտականություններին, մասնաճյուղում գործող կրթական գործընթացին վերաբերող և ուսանողներին առնչվող կանոնակարգերին և կարգերին, մասնավորապես՝ ԵՊՀ ԻՄ բակալավրի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման, ԵՊՀ ԻՄ ներքին կարգապահական, ԵՊՀ ԻՄ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման, զեղչերի տրամադրման, քննությունների բողոքարկման կարգին և այլն:
- ուսանողները ծանոթացել են / տրամադրվել է նաև էլեկտրոնային եղանակով/ ուսանողի ուղեցույցին, գրադարանից օգտվելու կանոններին և այլն:
- Ժամանակին իրականացվել են պայմանագրերի կնքման կազմակերպչական աշխատանքները:
- Կուրսի ավագին ծանոթացվել է մատյանների լրացմանը ներկայացվող պահանջներին:
- Ծանոթացվել է մասնաճյուղում գիտելիքների ստուգման և գնահատման համակարգին, մասնավորապես.

- Գնահատման մեթոդաբանությունը
- Ընթացիկ և եզրափակիչ գնահատման կազմակերպումը
- Գնահատման սանդղակը և նշագրումը
- ՈՒսանողի ակադեմիական տեղեկագիրը
- ՈՒսման առաջադիմությունը

- Ծանոթացվել է քննությունների վերահանձնման և բողոքարկման կարգին:
- Մշտադիտարկվել է ուսանողների հաճախումները, պարբերաբար կատարվել է մատյանների ստուգում:
- Առարկայական ծրագրերի, քննական հարցաշարերի տրամադրման վերահսկում ենք իրականացրել ամբիոնի վարիչի հետ համատեղ: Ժամանակին և ամբողջությամբ ուսանողներին են տրամադրվել քննությունների և ստուգումների հարցաշարերը:
- ՈՒսումնական խորհրդատուի ժամերին քննարկվել են տրամադրված հարցաշարերը և հաշվի են առնվել ուսանողների արձագանքները:
- Ծանոթացել եմ ուսանողների սոցիալ-կենցաղային պայմաններին:
- ՈՒսանողների հետ անհատական աշխատանքներ են տարվել բացակայությունների պատճառների պարզաբանման և կրճատման հետ կապված:
- Աշխատանքներ են տարվել անհրաժեշտ գրականության, դասախոսությունների, լրացուցիչ նյութերի տրամադրման և մասնաճյուղի գրադարանում դրանց առկայության վերահսկման ուղղությամբ:
- Քննությունների անցկացման գործընթացին ևս եղել է ուսումնական խորհրդատուի վերահսկողության ներքո:
- Մասնակցել եմ քննաշրջանի ամփոփման աշխատանքների, լուծարքային շրջանի կազմակերպմանը:
- Վերահսկել եմ ուսանողների ուսումնական առաջընթացը, օգնել նրանց՝ հաղթահարելու ուսման ընթացքում ծագած դժվարությունները, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար կազմակերպում խորհրդատվություններ:

Արտահայտվեցին.- Գ. Ավետիսյանը, Գ. Հովհաննիսյանը

Նրանք նշեց, որ ուսումնական խորհրդատուները ևս հաշվետվությունները ներկայացնեն պահպանելով ձևաչափը: Խորհրդատուն հանդիսանում է այն հիմնական օղակը, որի օգնությամբ առաջին կուրսի ուսանողը ինտեգրվում է մասնաճյուղին: Նշեցին նաև, որ այս բոլոր գործընթացները ողջունելի են և անհրաժեշտ է պարբերաբար վերահսկողություն իրականացնել դրանք անխափան իրականացնելու համար:

Որոշեցին.- «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» ուսումնական խորհրդատուների կատարած աշխատանքը գնահատել բավարար:

3. Ընթացիկ հարցեր

3.1.Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ Էդգար Հովհաննիսյանի դրամական խրախուսման մասին /Զեկ. Մ. Միքայելյան/

Մ. Միքայելյանը հայտնեց, որ ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ տ.գ.թ. Էդգար Հովհաննիսյանը 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակում «Էկոնոմետրիկա» դասընթացը /ֆինանսներ ԿԾ, երրորդ կուրս/ իրականացրել է դասընթացի կազմակերպման, վերահսկման և գնահատման առցանց համակարգով (online cms open engine), որը հնարավորություն է տվել.

- դասընթացի ամբողջ փաստաթղթաշրջանառությունը կազմակերպել էլեկտրոնային եղանակով՝ ուսանողներին հասանելի 24- ժամյա ռեժիմով:
- Կազմակերպել տնային առաջադրանքների հանձնարարումը և ստուգումը ավտոմատ եղանակով՝ վերջնաժամկետների սահմանման հնարավորությամբ:
- Կազմակերպել միջանկյալ և եզրափակիչ քննությունները առցանց եղանակով՝ ավտոմատ գնահատման հնարավորությամբ (գնահատականները հասանելի են լինում անմիջապես քննության ավարտից հետո):
- Կազմել բազմաբնույթ առաջադրանքներ (ընտրովի հարցեր, գրաֆիկական պատկերման խնդիրներ, սխեմաներ, բանաձևային մուտքով խնդիրներ, ավտոմատ պարամետրիզացիայով խնդիրներ և այլն):
- Ունենալ ամփոփ վիճակագրություն դասընթացի վերաբերյալ:

Մ. Միքայելյանը միջնորդեց Է. Հովհաննիսյանին ներկայացնել դրամական խրախուսման:

Որոշեցին.- Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ Էդգար Հովհաննիսյանին ներկայացնել դրամական խրախուսման:

Գիտխորհրդի նախագահ՝ *Գ. Ավետիսյան*

Քարտուղար՝ *Ա.Ալեքսանյան*